Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2025 մարտի 6-ին կայացած թիվ 12 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ. մարտի 6-ին կայացած թիվ 12 նիստը անցկացվեց հարցման կարգով:

Արտահերթ նիստի օրակարգում ներառված է 1 հարց՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանի հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյանը: Ներկայացվեց կենդանաբանության ամբիոնի երաշխավորությունը առկա ուսուցմամբ ասպիրանտ Մանան Վարազդատի Ասիկյանի և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Շողիկ Հակոբի Ղազարյանի թեկնածությունների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի երաշխավորությունը, 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով, որպես ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյանի օգնական ներգրավել «Կենդանաբանություն և մակաբուծաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող Շողիկ Հակոբի Ղազարյանին և որպես ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա.Ս. Ղազարյանի օգնական՝ առկա ուսուցմամբ ասպիրանտ Մանան Վարազդատի Ասիկյանին:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան